# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**13 նոյեմբերի 2013 թվականի N 113-Ա**

**ք. Հրազդան**

## Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 2013 թվականի նոյեմբերի 5-ի N 02/14.13/16821-13 գրությունը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետի 2013 թվականի նոյեմբերի 11-ի N 12518-13 զեկուցագիրը և *Հ. Ասատրյանի* գրավոր բացատրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի N 7 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն *Համլիկ Ասատրյանի* նկատմամբ կիրառել <<*նկատողություն*>> կարգապահական տույժը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ